Կասեցված է՝ այլևս արդիական չէ

Արձանագրություն Բարերի Համար: Հավելված Y-1

Ուժի մեջ է Հինգշաբթի, 2021թ.-ի Մայիսի 6-ի առավոտյան ժամը-12:01-ից

Վերջին Թարմացումները՝ (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

5/5/2021.

- Բարերը կարող են վերաբացվել փակ տարածքում գործունեության համար: Ներքին զբաղեցվածությունը առավելագույն զբաղեցվածության 25% -ն է կամ 100 հոգի, որը որ ավելի քիչ է՝ փոփոխություններով:
- Պարզաբանված են փակ տարածքի և բացօթյա նստատեղերի պահանջները:
- Հեռուստացույցները կարող են միացված լինել և փակ տարածքի և բացօթյա նստատեղերում:
- Կենդանի զվարճանքները թույլատրվում են միայն դրսում: Փակ տարածքում կենդանի զվարճանքները չեն թույլատրվում:

COVID-19-ով վարակման դեպքերի, հոսպիտալացումների և մահերի ցուցանիշները նվազել են և հաստատուն են թվում, սակայն COVID-19-ը շարունակում է բարձր վտանգ ներկայացնել համայնքների համար և բոլոր մարդկանցից և բիզնեսներից պահանջում է ձեռնարկել նախազգուշական միջոցառումներ և ձևափոխել գործողությունները և զբաղմունքներն այնպես, որ նվազեցնեն վարակի տարածման վտանգը:

Քանի որ Լոս Անջելեսի Շրջանը մտել է Նահանգի Ավելի Ապահով Տնտեսության Նախագծի շրջանակի <<Դեղին Կարգի>> (Yellow Tier) մեջ, այդ պատճառով մշակվել է սույն Արձանագրությունը՝ կիրառելու տեղային գործունեությանը բնորոշ որոշ սահմանափակումներ: Բիզնեսները պետք է շարունակեն իրենց գործունեությունը՝ պահպանելով զգուշություն և հետևեն սույն արձանագրությամբ սահմանված պահանջներին՝ նվազեցնելու COVID-19-ի հնարավոր տարածումն իրենց բիզնեսի գործունեության շրջանակում:

Սույն արձանագրությունը և արձանագրության ստորև ներկայացված պահանջները հատուկ են Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության կողմից վերաբացման թույլտվություն ստացած բարերին՝ որպես ցածր վտանգ ներկայացնող ռեստորաններ:

- Բարերը, որոնք առաջարկում են տեղում ճաշելու ծառայություն, պետք է հետևեն ճաշելու համար սահմանված բոլոր պահանջներին, որոնք ներկայացված են Ռեստորանների համար Արձանագրություններում. Հավելված I: Բարերը, որոնք ներկայումս արտոնագրված են վաճառելու գարեջուր, գինի կամ սպիրտային խմիչքներ բարի տարածքից դուրս սպառման համար, պետք է հետևեն նաև Մանրածախ Վաճառք Իրականացնող Հաստատությունների Արձանագրությանը. Հավելված B:
- Բարերը պետք է դադարեցնեն բոլոր խաղային գործողությունները, ներառյալ, բայց չսահմանափակվելով, այլ գործողությունների դադարեցմանը զուգահեռ բոուլինգը, նետողական դարթ խաղը, բիլիարդը՝ մինչև այս խաղերը կթույլատրվի վերսկսել (բացել)՝ ձևափոխված կամ լրիվ գործունեության համար:
- Գինի կամ գարեջուր արտադրող գինետները և գարեջրատները, որոնք ունեն գինու և գարեջրի համտեսման համար նախատեսված տարածք, բացառություն են կազմում Կալիֆորնիայի Առողջության և Անվտանգության Օրենսգրքի 113789 (c)(5) Բաժնով սահմանված սննդի հաստատության սահմանումից և նրանց գործունեության համար անհրաժեշտ չէ թույլտվություն, նրանք պետք է հետևեն Գարեջրատների, Գինեգործարանների և Սպիրտային Խմիչքների Թորման

Հաստատությունների Արձանագրություններին:

- Բարերը կարող են հյուրընկալել բացօթյա նստելակարգով կենդանի միջոցառումներ՝ համաձայն ԼԱ Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության (DPH) Բացօթյա Նստելակարգով Կենդանի Միջոցառումների և Ներկայացումների Արձանագրության:

Սույն արձանագրությանը համապատասխան գործող բոլոր բարերը կարող են բացվել բացօթյա և փակ տարածության մեջ ծառայություններ մատուցելու համար 25% զբաղեցվածությամբ կամ 100 հոգով, որը որ ավելի քիչ լինի՝ սույն արձանագրությամբ պահանջվող փոփոխություններով:

COVID-19-ը հիմնականում տարածվում է այն ժամանակ, երբ մարդիկ ֆիզիկապես մոտ են գտնվում COVID-19-ով վարակված անձին կամ անմիջական շփում ունեն այդ անձի հետ: Երբ COVID-19-ով հիվանդ անձինք հազում, փռշտում, երգում, խոսում կամ շնչում են, նրանք արտադրում են շնչառական կաթիլներ: Եվ՝ համաձայն Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնների, COVID-19-ի տարածման վտանգը մեծանում է ցանկացած հաստատությունում, որտեղ անձինք ուտում են և խմելիս հանում են իրենց դիմակները, ինչպես նաև մեծանում է շփումը միևնույն ընտանիքի անդամ չհանդիսացող անձանց հետ:

- **Ամենացածր Վտանգ**. Սննդի/ըմպելիքների ծառայությունները սահմանափակվում են մեքենայով մոտենալ-վերցնելու, առաքման, վերցնել-տանելու և մայթեզրից վերցնելու տարբերակներով:
- **Ավելի Շատ Վտանգ**. Կարևորվում են մեքենայով մոտենալ-վերցնելու, առաքման, վերցնել-տանելու և մայթեզրից վերցնելու տարբերակները: Տեղում ճաշելը/ըմպելիքներ մատուցելու ծառայությունները սահմանափակվում են բացօթյա տարածքում նստելու տարբերակով: Նստատեղերի քանակը նվազեցված է՝ թույլատրելու տեղադրել սեղաններն իրարից հեռու:
- **Ավելի Բարձր Վտանգ**. Տեղում ճաշելու/ըմպելու հնարավորությունը՝ փակ տարածքում նստելու տարբերակով, նվազեցված է՝ թույլատրելու տեղադրել սեղաններն իրարից հեռու: Եվ/կամ տեղում ճաշել/ըմպել՝ բացօթյա տարածքում նստելու դեպքում սեղանները տեղադրված չեն իրարից հեռու:
- **Ամենաբարձր Վտանգ**. Տեղում ճաշելը/ըմպելը՝ փակ տարածքում նստելու հնարավորությամբ: Նստելու զբաղվածության չափը նվազեցված չէ և սեղաններն իրարից հեռու չեն տեղադրված:

Հաջորդող արձանագրություններում «ընտանիք» տերմինը սահմանվում է որպես «միասին՝ մեկ կենդանի միավորի շրջանակում ապրող անձինք», և չպետք է ներառի կառուցվածքային խմբով համատեղ կացության միավորներ, ինչպիսիք են հանրակացարանները, եղբայրությունները, համայնքապետությունները, վանքերը, միաբանությունները, կամ բնակելի խնամքի հաստատությունները, և չպետք է ներառի նաև առևտրային հիմքով բնակության միավորներ, ինչպիսիք են՝ պանսիոնատները, հյուրանոցները, կամ մոթելները:[1] «Անձնակազմ» և «աշխատակից» տերմինները ներառում են աշխատակիցներին, կամավորներին, պրակտիկանտներին և վերապատրաստվողներին, գիտնականներին և մյուս բոլոր անձանց, որոնք աշխատանքներ են իրականացնում հաստատության տարածքում: «Այցելուներ» կամ «հաճախորդներ» տերմինները հասկացվում են որպես հասարակության անդամներ և այլ անձինք, որոնք անձնակազմի անդամներ կամ աշխատակիցներ չեն, և որոնք ժամանակ են անցկացնում բիզնեսի կամ հաստատության տարածքում: «Շենք», «տարածք» և «հաստատություն» տերմինները երկուսն էլ վերաբերում են շինությանը, տարածքին և հարակից ցանկացած շենքին կամ տարածքին, որտեղ իրականացվում են թույլատրված գործողություններ: LACDPH-ն Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունն է:

Սույն արձանագրությամբ, մարդիկ համարվում են "լիարժեք պատվաստված" *:

- Անցել է 2 (երկու) շաբաթ կամ ավել ժամանակ 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի 2-րդ դեղաչափը ստանալուց հետո (օր՝ Pfizer-BioNTech կամ Moderna) կամ

[1] Լոս Անջելեսի Շրջանի Օրենսգիրք, Վերնագիր 22. §22.14.060 - Ընտանեկան սահմանում: (Կարգ. 2019-0004 § 1, 2019) https://library.municode.com/ca/los_angeles_county/codes/code_of_ordinances?nodeId=TIT22PLZO_DIV2DE_CH22.14DE_22.14.060F

- Անցել է 2 շաբաթ կամ ավել ժամանակ մեկ դեղաչափից բաղկացած պատվաստանյութը ստանալուց հետո (օր.՝ Johnson and Johnson [J&J]/Janssen):

* Սա վերաբերվում է COVID-19 պատվաստանյութերին, որոնք ներկայումս լիազորված են արտակարգ իրավիճակներում կիրառության համար Սննդի և Դեղորայքի Վարչության կողմից. Pfizer-BioNTech, Moderna, և Johnson and Johnson (J&J)/Janssen COVID-19 պատվաստանյութերը: Այս ուղեցույցը կարող է նաև կիրառվել COVID-19 պատվաստանյութերի դեպքում, որոնք լիազորվել են արտակարգ իրավիճակներում կիրառության համար Համաշխարհային Առողջության Կազմակերպության կողմից (օր.՝ AstraZeneca/Oxford): Տե՛ս WHO-ի կայքը WHO-ի կողմից լիազորված COVID-19 պատվաստանյութերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար:

Ի հավելումն Բարերի նկատմամբ Նահանգի Հանրային Առողջապահության Պատասխանատուի կողմից կիրառվող պայմանների՝ Բարերը պետք է համապատասխանեն նաև անվտանգության և վարակի վերահսկման հետևյալ արձանագրություններին:

Խնդրում ենք նկատի ունենալ՝ սույն փաստաթուղթը կարող է թարմացվել լրացուցիչ տեղեկությունների, կամ աղբյուրների հասանելի դառնալու դեպքում, ուստի մի՛ մոռացեք կանոնավոր կերպով ստուգել Լոս Անջելեսի Շրջանի վեբ կայքը՝ http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/ սույն փաստաթղթի և առնչվող ուղեցույցի ցանկացած թարմացմանը ծանոթանալու համար:

Սույն փաստաթուղթը ներառում է՝

(1) Աշխատավայրի գործունեության ծրագրեր ու գործելակերպ՝ ուղղված աշխատակիցների առողջության պաշտպանությանը
(2) Ֆիզիկական հեռավորության պահպանմանն ուղղված միջոցառումներ
(3) Վարակի վերահսկումն ապահովելու միջոցառումներ
(4) Հաղորդակցություն աշխատակիցների և հանրության հետ
(5) Կարևոր ծառայություններին անաչառ հասանելիության ապահովման միջոցառումներ:

Վերաբացման ցանկացած արձանագրություն մշակելիս պետք է հաշվի առնել վերոհիշյալ հինգ հիմնական ոլորտները:

Սույն արձանագրության մեջ ներառված բոլոր հաստատությունները պետք է իրագործեն ստորև թվարկված բոլոր կիրառելի միջոցառումները ու պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու չիրականացված որևէ միջոցառում կիրառելի չէ տվյալ բիզնեսի համար:

Բիզնեսի Անունը ______________________

Հաստատության Հասցեն՝ ______________________

Նախնական Առավելագույն Զբաղվածությունը՝ ______________________

Զբաղվածության Սահմանաչափը՝ ______________________

Հրապարակման Ամսաթիվը՝ ______________________

Կասեցված է այլևս արդիական չէ

A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ (ՆՇԵԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ ՏԱՐԲԵՐԱԿԵՐԸ)

- ❑ Բոլոր անձանց, որոնք կարող են կատարել իրենց աշխատանքային պարտականությունները տնից, պետք է հանձնարարել աշխատել տնից:
- ❑ Խոցելի անձնակազմին (65 տարեկանից բարձր, հղի և քրոնիկական առողջական խնդիրներ ունեցող անձինք) պետք է հանձնարարել այնպիսի աշխատանք, որը հնարավորության դեպքում կարելի է կատարել տնից, և նրանք պետք է քննարկեն ցանկացած մտահոգություն իրենց բուժօգնություն տրամադրողի կամ մասնագիտացված առողջապահական ծառայություններ տրամադրողների հետ՝ աշխատավայր վերադառնալու վերաբերյալ համապատասխան որոշումներ կայացնելու համար:
- ❑ Բոլոր աշխատակիցներին պետք է տեղեկացուին որպեսզի հիվանդ հնելու, կամ COVID-19-ով վարակված անձի հետ շփման հետևանքով անհրաժեշտաբար կարանտին պահպանելու դեպքում չգան աշխատանքի:
- ❑ Մուտքի ստուգումները պետք է իրականացվեն նախքան աշխատակիցների, վաճառողների և առաքման անձնակազմի կողմից աշխատավայր մուտք գործելը՝ հատուկ LACDPH Մուտքի Ստուգումների Ուղեցույցի: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անձը տվյալ պահին ենթակա է մեկուսացման կամ կարանտինի հրահանգներին: Նշված ստուգումները կարող են կատարվել հեռակա կարգով կամ աշխատավայրում անձնապես՝ աշխատակիցների ժամանման պահին: Հնարավորության դեպքում պետք է կատարվի ջերմաչափում:
  - Ստուգման Բացասական Արդյունք (Մուտքը Թույլատրվում է). Եթե անձը չունի ախտանիշ(ներ) և վերջին 10 օրերի ընթացքում շփում չի ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, նա կարող է այդ օրը մուտք գործել աշխատավայր:
  - Ստուգման Դրական Արդյունք (Մուտքը Չի Թույլատրվում).
    - Եթե անձն ամբողջովին պատվաստված չէ[2] COVID-19-ի դեմ և վերջին 10 օրերի ընթացքում շփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ կամ տվյալ պահին ենթակա է կարանտին պահպանելու հրահանգներին, նա չի կարող մուտք գործել կամ աշխատել հաստատության տարածքում և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը կարանտին պահպանելու: Տրամադրեք նրան կարանտին պահպանելու հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidquarantine:
    - Եթե անձի մոտ դրսևորվում է վերևում թվարկված ախտանիշներից որևէ մեկը, կամ նա տվյալ պահին ենթակա է մեկուսացման հրահանգներին, նա չի կարող մուտք գործել կամ աշխատել հաստատության տարածքում և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ մեկուսանալու տանը: Տրամադրեք նրան մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidisolation:
- ❑ Աշխատակիցներին պետք է տրամադրվի տեղեկատվություն գործատուի, կամ կառավարության կողմից հովանավորվող արձակուրդի նպաստների մասին, որոնցից աշխատակիցը կարող է օգտվել, ինչը ֆինանսապես ավելի կհեշտացնի նրա տանը մնալը: Լրացուցիչ տեղեկությունները տե՛ս

Կապեցված է պատճեն չէ

[2] Մարդիկ համարվում են COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված, եթե անցել է 2 (երկու) շաբաթ ժամանակ 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի 2-րդ դեղաչափը ստանալուց հետո (օր՝ Pfizer-BioNTech կամ Moderna) կամ անցել է 2 շաբաթ մեկ դեղաչափից բաղկացած պատվաստանյութը ստանալուց հետո (օր.՝ Johnson and Johnson [J&J]/Janssen):

հիվանդության հետևանքով բացակայությունների կառավարական ծրագրերի օժանդակության և COVID-19-ի հետ կապված աշխատակիցների փոխհատուցումների վերաբերյալ, ներառյալ՝ աշխատողների հիվանդության պատճառով բացակայությունների իրավունքները 2021թ.-ի COVID-19-ի Հիվանդության Հիմքով Լրացուցիչ Վճարվող Արձակուրդի Օրենքի ներքո:

- ❑ Տեղեկանալով, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների թեստի պատասխանը դրական է, կամ նրանք ունեն COVID-19-ին համահունչ ախտանիշներ (վարակման դեպք), գործատուն պետք է տեղում ունենա ծրագիր կամ արձանագրություն, որպեսզի այդ վարակված անձը (վարակված դեպքերը) մեկուսանա(ն) տանը, և աշխատավայրում վարակված անձի/դեպքի (դեպքերի) հետ շփում ունեցած բոլոր աշխատակիցներից պահանջի անհապաղ ինքնակարանտին պահպանել: Գործատուի ծրագիրը պետք է նախատեսի արձանագրություն կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար, որը կապահովի հասանելիություն COVID-19-ի համար թեստ հանձնելու՝ որոշելու, թե արդյոք աշխատավայրում տեղի են ունեցել վարակման լրացուցիչ դեպքեր, ինչը կարող է պահանջել COVID-19-ի վերահսկմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների իրականացում: Տե՛ս հանրային առողջապահության ուղեցույցն այստեղ՝ Աշխատավայրում COVID-19-ին արձագանքը:
- ❑ Այն դեպքում, երբ սեփականատերը, մենեջերը, կամ օպերատորը տեղեկանում են 14 օրվա ընթացքում աշխատավայրում COVID-19-ով վարակման երեք (3) կամ ավելի դեպքերի մասին, գործատուն պետք է խմբակային վարակման տվյալ դեպքի մասին հաղորդի Հանրային Առողջապահության Վարչությանը հետևյալ հեռախոսահամարներով՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821 կամ առցանց՝ հետևյալ կայքով www.redcap.link/covidreport: Աշխատավայրում խմբակային վարակման հայտնաբերման դեպքում Հանրային Առողջապահության Վարչությունը նախաձեռնում է պատասխան արձագանք, որը ներառում է վարակի վերահսկման ուղեցույցների և առաջարկությունների տրամադրում, տեխնիկական աջակցություն և տեղանքին հատուկ վերահսկման միջոցառումների իրականացում: Հանրային առողջապահության գործերի կառավարչին կհանձնարարվի խմբակային դեպքի քննությունը՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:
- ❑ Այլ անձանց հետ շփում ունեցող աշխատակիցներին պետք է անվճար տրամադրել համապատասխան դիմակ, որը ծածկում է քիթը և բերանը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության Դիմակների վեբ կայքը http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/masks: Աշխատակիցը պետք է ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում մշտապես կրի դիմակ այլ անձանց հետ շփման կամ հնարավոր շփման ժամանակ: Այն աշխատակիցները, որոնց իրենց բժիշկը կարգադրել է չկրել դիմակ, պետք է կրեն դեմքի վահան՝ ստորին հատվածում ամրացված կտորով, որպեսզի համապատասխանեն Նահանգի հրահանգներին, եթե իրենց առողջական վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են կզակը ծածկող կտորով դեմքի վահանները: Միակողմանի փականով դիմակների օգտագործումն արգելվում է:
- ❑ Աշխատակիցներին պետք է տրամադրել դիմակների պատշաճ կրման, դիմակները խնամելու՝ ներառյալ այդ դիմակները քիթը և բերանը ծածկելով կրելու, ինչպես նաև ամեն օր դիմակները լվանալու և փոխարինելու անհրաժեշտության մասին կարգադրություններ:
- ❑ Դեմքի վահանները պետք է տրամադրվեն և դրանք օգտագործվեն սպասարկման ողջ անձնակազմի և մյուս աշխատակիցների կողմից, ովքեր շփվում են, կամ կարող են շփում ունենալ հաճախորդի հետ (սա ներառում է, բայց չի սահմանափակվում, հյուրընկալներին, հյուրընկալուհիներին (տանտիրուհի) և սպասարկող անձնակազմին, որոնք շփվում են, հաճախորդների հետ, ինչպես նաև մյուս աշխատակիցներին, ինչպիսիք են՝ սեղանները մաքրողները, առաքիչները և այլ անձինք, որոնք կարող են մուտք գործել տան առաջնամաս): Դեմքի վահանը պետք է կրել դիմակին զուգահեռ. դիմակներն օգնում են պաշտպանել դիմակ կրողին այլ անձանց կաթիլներից: Դեմքի վահանները պարտադիր չեն այն աշխատողների համար, որոնք իրենց գործատուին ցույց են տալիս ամբողջապես պատվաստված լինելու վերաբերյալ ընդունելի ապացույց, սակայն դիմակներ կրելը մնում է անհրաժեշտ պայման: Ամբողջովին

պատվաստված աշխատողների համար, ովքեր ներկայացրել են COVID-19-ի դեմ իրենց լիարժեք պատվաստման ապացույցը, և որոշում են չկրել դեմքի վահան, գործատուն պետք է ստեղծի և պահպանի գրավոր փաստաթուղթ, որ այդ աշխատողներից յուրաքանչյուրը իրեն ցույց է տվել լիարժեք պատվաստումների ընդունելի ապացույց: Գործատուն պարտավոր չէ պահպանել իրեն ներկայացված լիարժեք պատվաստման մասին ապացույցի կրկնօրինակը:

- Մարդիկ համարվում են COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված, եթե անցել է ≥ 2 (երկու) շաբաթ ժամանակ 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի 2-րդ դեղաչափը ստանալուց հետո (օր՝ Pfizer-BioNTech կամ Moderna) կամ անցել է ≥ շաբաթ մեկ դեղաչափից բաղկացած պատվաստանյութը ստանալուց հետո (օր.՝ Johnson and Johnson [J&J]/Janssen):
- Հետևյալները հանդիսանում են ամբողջապես պատվաստված լինելու վերաբերյալ ընդունելի ապացույց աշխատակցի կողմից գործատուին ներկայացնելու համար. Պատվաստման քարտ (որը ներառում է պատվաստված անձի անունը, տրամադրված պատվաստանյութի տեսակը և վերջին դեղաչափը ստանալու ամսաթիվը) ԿԱՄ պատվաստման քարտի լուսանկար՝ որպես առանձին փաստաթուղթ, ԿԱՄ հաճախորդի պատվաստման քարտի լուսանկար՝ պահպանված հեռախոսի կամ էլեկտրոնային սարքի մեջ, ԿԱՄ ամբողջովին պատվաստված լինելու վերաբերյալ փաստաթղթեր՝ տրված առողջապահական ծառայություններ տրամադրողի կողմից (որը ներառում է պատվաստված անձի անունը և հաստատում է, որ տվյալ անձն ամբողջովին պատվաստված է COVID-19-ի դեմ):

- ❑ Դեմքի վահանները պետք է կրել, մաքրել և ախտահանել՝ համաձայն արտադրողի ցուցումների:
- ❑ Դիմակների հետևողական և ճշգրիտ կրելն ապահովելու համար աշխատակիցներին արգելվում է ուտել կամ խմել՝ բացառությամբ իրենց ընդմիջումների, երբ կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելու կամ խմելու ողջ ընթացքում աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում մյուսներից հեռու:
- ❑ Անհատական հաճախորդներին կամ խմբերին սպասարկող աշխատակիցների քանակը պետք է սահմանափակվի՝ համաձայն աշխատավարձի և աշխատանքային ժամի տևողության կարգավորումների:
- ❑ Զբաղվածությունը պետք է նվազեցվի և աշխատակիցների միջև հեռավորությունը պետք է հասցվի առավելագույնի յուրաքանչյուր սենյակում կամ տարածքում, որն օգտագործվում է աշխատակիցների կողմից ճաշելու և/կամ ընդմիջումների համար: Դա կարելի է իրագործել հետևյալ կերպ՝
  - Ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում տեղադրել ցուցանակներ, որոնք կտեղեկացնեն առավելագույն զբաղվածության մասին, որը համապատասխանում է անձանց միջև թույլատրվող առնվազն վեց ոտնաչափ հեռավորությանը:
  - Դասակարգել ընդմիջումների կամ ճաշելու ժամերը՝ նվազեցնելու զբաղվածությունն այն սենյակներում և տարածքներում, որոնք օգտագործվում են ճաշելու կամ ընդմիջումների համար, և
  - Տեղադրել սեղաններն իրարից առնվազն ութ ոտնաչափ հեռավորությամբ և նստատեղերի միջև ապահովել առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն, հեռացնել կամ ժապավենով նշել նստատեղերը՝ նվազեցնելու զբաղվածությունը, հատակին անել նշումներ՝ ապահովելու հեռավորության պահպանումը, և դասավորել նստատեղերն այնպես, որ նվազեցվի դեմ առ դեմ շփումը: Խրախուսվում է պատնեշների կիրառումը վարակի լրացուցիչ տարածումը կանխելու համար, սակայն դրանք չպետք է համարվեն փոխարինող տարբերակներ զբաղվածության նվազեցմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը:
- ❑ Աշխատակիցներին պետք է կարգադրել պահպանել ձեռքերի հիգիենա՝ ներառյալ ձեռքերի լվացման

Կասեցված է, այլևս կիրառելի չէ

հաճախականությունը, ձեռքերի ախտահանման միջոցների և ձեռնոցների պատշաճ օգտագործումը:

- ❑ Աշխատակիցներին անհրաժեշտ է տրամադրել ժամանակ ձեռքերը հաճախ լվանալու համար:
- ❑ Աշխատակիցներին պետք է հիշեցնել հազալիս և փռշտալիս ծածկել իրենց բերանը անձեռոցիկով: Օգտագործված անձեռոցիկը անհրաժեշտ է նետել աղբարկղը, և ձեռքերն անմիջապես լվանալ օճառով և տաք ջրով առնվազն 20 վայրկյան:
- ❑ Բոլոր աշխատակիցներին, վաճառողներին և առաքման անձնակազմին հայթայթել տեղեկություններ պահպանելու ֆիզիկական հեռավորություն և կրել դիմակներ այլ անձանց շրջապատում գտնվելիս:
- ❑ Ընդմիջման սենյակները, զուգարանները և ընդհանուր օգտագործման այլ տարածքներն աշխատանքային ժամերին ախտահանվում են ստորև ներկայացված հաճախականությամբ, սակայն ոչ քիչ, քան օրը մեկ անգամ՝ հետևյալ ժամանակացույցով.
  - Ընդմիջման սենյակներ _____
  - Զուգարաններ _____
  - Այլ _____

_____

- ❑ Ախտահանիչները և նման միջոցները պետք է հասանելի լինեն աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում՝

_____

- ❑ COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանիչ միջոցը պետք է հասանելի լինի բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում՝

_____

- ❑ Սույն Արձանագրության պատճենները պետք է տրամադրվեն բոլոր աշխատակիցներին:
- ❑ Ընտրովի—Նկարագրեք այլ միջոցառումներ:

_____

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նստատեղեր փակ տարածության մեջ.

- ❑ Փակ տարածության մեջ հաճախորդների թիվը սահմանափակվում է ներսի զբաղեցվածության 25%-ով կամ առավելագույնը 100 ներկաներով, որը որ ավելի քիչ է: Հնարավորության դեպքում կայանատեղերը վերաձևակերպվում են՝ կուտակումները սահմանափակելու և պատշաճ տարանջատումն ապահովելու համար:
  - Փակ տարածության մեջ հաճախորդների առավելագույն քանակը սահմանափակվում է՝ _____
- ❑ Տարբեր սեղանների մոտ նստած հաճախորդների միջև առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն ապահովելու համար սեղանները պետք է լինեն առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորության վրա՝ չափված մի սեղանի աթոռի հետևից մինչև հարակից սեղանի աթոռի հետևի մասը, մինչ հաճախորդները նստած են: Սա նաև թույլ է տալիս սեղանների միջև անցնելու տարածություն ունենալ և հաշվի է առնում աթոռների դուրս հրումը և սեղանի շուրջ նստած հաճախորդների կողմից զբաղեցումը: Օրգանական ապակին կամ այլ խոչընդոտները չեն փոխարինում սեղանների և հաճախորդների միջև պահանջվող հեռավորությանը: Տե՛ս «Թույլատրելի զբաղեցվածության սահմաններում նստատեղերի հաստատված կազմաձևման օրինակներ» բաժինը ստորև:
- ❑ Սեղանի մոտ տեղավորվող նստատեղերը սահմանափակվում են միևնույն խմբի ոչ ավելի, քան վեց (6) անձով: Փակ տարածության մեջ սեղանի շուրջ նստած բոլոր մարդիկ պետք է լինեն նույն տան

Ստեղծված է՝ այլևս կիրառելի չէ

անդամները և, այդպիսով, ստիպված չեն նստել միմյանցից վեց ոտնաչափ հեռավորության վրա: Նախքան նստելը, հյուրընկալը բանավոր կերպով տեղեկացնում է խմբին, որ միևնույն սեղանի շուրջ նստող բոլոր անձինք պետք է լինեն միևնույն տնային տնտեսությա անդամ:

- ❑ Եթե խմբի բոլոր անդամները նախքան նստելը վկայեն և ապացուցեն, որ նրանք ամբողջովին պատվաստվել են COVID-19-ի դեմ, նրանք կարող են նստել սեղանի շուրջ մինչև վեց (6) հոգով և մինչև վեց (6) տարբեր տնային տնտեսությունների անդամներով: Հաճախորդները, որոնք հաստատել են լիարժեք պատվաստված լինելը, պետք է օպերատորին ցույց տան անհրաժեշտ ստուգումը, որը հանդիսանում է նկարով նույնականացումը և լիարժեք պատվաստման ապացույցը, ինչպիսին է նրանց պատվաստման քարտը (որը պարունակում է պատվաստված անձի անունը, տրամադրված պատվաստման տեսակը և վերջին դեղաչափի ամսաթիվը) կամ նրանց պատվաստանյութի քարտի լուսանկարը՝ որպես առանձին փաստաթուղթ կամ հեռախոսի կամ էլեկտրոնային սարքում պահված հաճախորդի պատվաստանյութի քարտի լուսանկար, կամ էլ COVID-19 դեմ նրանց լիարժեք պատվաստման փաստաթուղթ՝ առողջապահական մատակարարից, նախքան նրանց միասին նստելը:

Բացօթյա նստատեղեր.

- ❑ Բացօթյա նստելու տարածքում հաճախորդների թիվը պետք է լինի բավական քիչ՝ ապահովելու ֆիզիկական հեռավորության պահպանումը: Բացօթյա նստատեղերի սեղանները պետք է տեղադրված լինեն այնպես, որ թույլատրեն սեղանների միջև առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն, որը՝ <u>չափվելով մեկ սեղանի աթոռի մեջքի հատվածից մինչև հարակից սեղանի աթոռի մեջքի հատվածը, երբ հաճախորդները նստած են:</u> Պլաստմասսե ապակիները կամ մյուս պատնեշները չեն փոխարինում սեղանների և հաճախորդների միջև անհրաժեշտ հեռավորության պահպանմանը: Տե՛ս ստորև «Նստատեղերի հաստատված ամրագրումների օրինակները թույլատրելի զբաղվածության սահմաններում» բաժինը:
- ❑ Բացօթյա տարածքի նստատեղերում հաճախորդների առավելագույն քանակը սահմանափակվում է հետևյալով՝ __________, որը որոշվում է սեղանները մյուս սեղաններից ըստ վերը նկարագրվածի տեղադրելուց և յուրաքանչյուր սեղանի շուրջ առավելագույնը ութ (8) նստատեղ տեղադրելուց հետո հասանելի նստատեղերի քանակով:
- ❑ Բացօթյա տարածքում սեղանի շուրջ նստատեղերի քանակը պետք է սահմանափակվի նույն խնջույքին մասնակցող ոչ ավելի, քան ութ (8) անձանցով: Բոլոր անձինք, որոնք նստած են բացօթյա սեղանի շուրջ, կարող են լինել ոչ ավելի, քան երեք տարբեր ընտանիքների անդամներ: Նախքան նստելը հյուրընկալող անձը պետք է բանավոր տեղեկացնի խնջույքի մասնակիցներին, որ սեղանի շուրջ նստող անձինք կարող են լինել ոչ ավելի, քան երեք ընտանիքների անդամներ:
- ❑ Եթե խմբի բոլոր անդամները նախքան նստելը վկայեն և ապացուցեն, որ նրանք ամբողջովին պատվաստվել են COVID-19-ի դեմ, նրանք կարող են նստել սեղանի շուրջ մինչև ութ (8) հոգով և մինչև ութ (8) տարբեր տնային տնտեսությունների անդամներով: Հաճախորդները, որոնք հաստատել են լիարժեք պատվաստված լինելը, պետք է օպերատորին ցույց տան անհրաժեշտ ստուգումը, որը հանդիսանում է նկարով նույնականացումը և լիարժեք պատվաստման ապացույցը, ինչպիսին է նրանց պատվաստման քարտը (որը պարունակում է պատվաստված անձի անունը, տրամադրված պատվաստման տեսակը և վերջին դեղաչափի ամսաթիվը) կամ նրանց պատվաստանյութի քարտի լուսանկարը՝ որպես առանձին փաստաթուղթ կամ հեռախոսի կամ էլեկտրոնային սարքում պահված հաճախորդի պատվաստանյութի քարտի լուսանկար, կամ էլ COVID-19 դեմ նրանց լիարժեք պատվաստման փաստաթուղթ՝ առողջապահական մատակարարից, նախքան նրանց միասին նստելը:
- ❑ Հաստատությունը պետք է խստորեն և շարունակաբար կատարի չափագրումներ հաճախորդների կողմից դեպի բացօթյա տարածքի նստատեղեր բոլոր մուտքերի ու ելքերի վերաբերյալ, որպեսզի հետևի զբաղվածությանը՝ ապահովելու զբաղվածության սահմանաչափի համապատասխանությունը: Այն

հաստատությունները, որոնք կատարում են անբավարար չափումներ կամ չափումներ չեն կատարում կամ, հավանաբար գերազանցում են սահմանաչափը, կարող են ժամանակավորապես փակվել հանրային առողջապահության տեսուչի որոշմամբ, մինչև այդ խնդիրները շտկված կլինեն՝ համաձայն հանրային առողջապահության տեղային տեսուչի որոշման: Հնարավորության դեպքում ապահովեք մեկ, հստակ սահմանված մուտք և առանձին ելքեր՝ օգնելու պահպանել ֆիզիկական հեռավորություն:

- ❑ Պատրաստ եղեք հաճախորդներին դրսում հերթ կանգնեցնելու՝ միաժամանակ ապահովելով ֆիզիկական հեռավորության պահպանումը, ներառյալ՝ տեսողական ազդանշանների կիրառումը: Անհրաժեշտության դեպքում դիմակ կրող աշխատակիցը (կամ աշխատակիցները, եթե կան մեկից ավելի մուտքեր) պետք է կանգնի դռան մոտ՝ ամենամոտ գտնվող հաճախորդներից առնվազն 6 ոտնաչափ հեռավորությամբ՝ հետևելու զբաղվածությանը և ուղղորդելու հաճախորդներին դրսում շարք կանգնել՝ վեց ոտնաչափ իրարից հեռու, եթե հաստատությունը հասել է առավելագույն զբաղվածության սահմանաչափին կամ մինչև հաճախորդների ամրագրման ժամը կմոտենա:
- ❑ Հաստատությունները, որոնք օգտագործում են ցանկացած բացօթյա կառուցվածք, պետք է համապատասխանեն Նահանգի բացօթյա տարածքների չափանիշներին՝ ինչպես սահմանված է Կալիֆորնիայի Առողջապահության Վարչության պարտադիր ուղեցույցում՝ [Բացօթյա Բիզնեսների Գործունեության համար Ժամանակավոր Կառույցների Կիրառում:]() [Բացօթյա կառուցվածքները, որոնք չեն համապատասխանում Նահանգի բացօթյա տարածքների չափանիշներին որակվում են որպես փակ տարածքներ և սահմանափակվում է 25% զբաղեցվածությամբ:]()
- ❑ Ալկոհոլային խմիչքների պատրաստման կամ մատուցման համար օգտագործվող բարերի տարածքները պետք է փակ լինեն բարի սեղանի շուրջ խմիչքների մատուցման համար:
- ❑ Հաճախորդների դիտելու համար կարող են օգտագործվել հեռուստացույցներ կամ այլ էկրաններ, որոնք տեղակայված են փակ կամ բացօթյա նստատեղերի տարածքում:
- ❑ Բացօթյա կենդանի զվարճանքը պետք է հետևի Ռեստորանի համար Արձանագրության՝ Հավելված I-ի բացօթյա կենդանի զվարճանքի համար պահանջներին: Փակ տարածքում կենդանի զվարճանքը չի թույլատրվում:
- ❑ Հաստատություններին չի թույլատրվում կազմակերպել փակ տարածքում ընդունելություններ, բանկետներ կամ համակարգված, կազմակերպված կամ հրավիրված այլ միջոցառումներ կամ ցանկացած տեսակի հավաքույթներ:
- ❑ Հնարավորության դեպքում անհրաժեշտ է ապահովել մեկ, հստակ սահմանված մուտք և առանձին ելքեր՝ օգնելու պահպանել ֆիզիկական հեռավորություն:
- ❑ Ֆիզիկական հեռավորության պահպանմանն ուղղված միջոցառումները պետք է պահպանվեն այնտեղ, որտեղ հաճախորդները, կամ աշխատակիցները հերթ են կանգնում: Սա ներառում է վճարումների վայրերը և տերմինալները, վաճառասեղանները, զուգարանները, վերելակի նախասրահները, սպասելու համար նախատեսված հենարանները և տարածքները, մեքենաներից իջնելու վայրերը (valet drop off) և ցանկացած այլ տարածքներ, որտեղ հավաքվում են հաճախորդները:
    - ○ Տեղադրել ժապավեններ կամ այլ գծանշումներ՝ 6 ոտնաչափ ընդմիջումներով, ցանկացած տարածքում, որտեղ մարդիկ կարող են հերթ կազմել կամ հերթ կանգնել:
    - ○ Հնարավորության դեպքում ստեղծել ուղղություն ցույց տվող միջանցքներ և անցուղիներ ոտքով երթևեկության համար՝ նվազագույնի հասցնելու աշխատողների և հաճախորդների իրար կողքով անցնելը:
    - ○ Հնարավորության դեպքում և՛ դեմքի վահան և՛ դիմակ կրող աշխատակիցը պետք է կանգնի վերոնշյալ վայրերի մոտ, սակայն առնվազն 6 ոտնաչափ հեռավորությամբ ամենամոտ գտնվող հաճախորդներից՝ վերահսկելու ֆիզիկական հեռավորության պահպանումը:

Կասեցված է՝ այլևս ուժի մեջ չէ

- ❑ Ըստ հնարավորության անհրաժեշտ է կիրառել տեխնոլոգիական լուծումներ՝ նվազեցնելու անձանց միջև շփումը. բջջային տարբերակով պատվեր և ճաշացանկով պլանշետներ, նստատեղերի տեքստային ամրագրում, անհպում վճարման տարբերակներ:
- ❑ Անհրաժեշտ է հաճախորդների, առաքման վարորդների և աշխատակիցների միջև սահմանել շփման կարգ՝ պահպանելու ֆիզիկական հեռավորություն:
  - ○ Ռեստորանի ներսում և ռեստորանից դուրս հատակը, որտեղ հաճախորդները, վաճառողները, առաքման անձնակազմը, կամ այլ անձինք կարող են սպասել, պետք է գծանշված լինի՝ հնարավոր դարձնելու և ապահովելու ֆիզիկական հեռավորության պահպանումը:
  - ○ Հնարավորության սահմաններում անհրաժեշտ է իրականացնել հյուրերի կողմից սնունդ վերցնելու և առաքման անշփում գործընթացներ՝ տարբեր էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ:
  - ○ Հնարավորության դեպքում աշխատակիցների և հաճախորդների միջև շփումը պետք է սահմանափակվի առավելագույնը հինգ րոպեով:
- ❑ Անհրաժեշտ է սահմանափակել անձնակազմի անդամների և հաճախորդների շփումը՝
  - ○ Մուտքի տարածքներում, սպասելու համար նախատեսված վայրերում կամ պատվերներ անելու տարածքներում, և նմանատիպ այլ վայրերում, որտեղ վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանելը դժվար է, տեղադրեք ֆիզիկական պատնեշներ, ինչպիսիք են՝ միջնապատերը կամ պլաստմասսե ապակիները (plexiglass):
  - ○ Սահմանափակեք անհատական խնջույքներ սպասարկող աշխատակիցների քանակը:
- ❑ Չի խրախուսվում աշխատակիցների և հաճախորդների կողմից բարձր կուտակումներով վայրերում հավաքվելը, ինչպիսիք են՝ լոգարանները, միջանցքները, բարի տարածքները, ամրագրումների վայրերը և կրեդիտ քարտերի տերմինալները, և այլն:
- ❑ Ֆիզիկական հեռավորության պահպանման արձանագրությունները պետք է կիրառվեն բոլոր սենյակներում, խոհանոցներում, մթերանոցներում, սառցարաններում կամ աշխատակիցների բարձր խտությամբ կուտակումների այլ վայրերում:
  - ○ Հնարավոր են պատահական շփումներ, այնուամենայնիվ նպատակն է՝ սահմանափակել այդ շփումն առավելագույնը 15, ցանկալի է 10 րոպեով, և աշխատակիցները պետք է մշտապես կրեն իրենց դիմակները:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՆԱԽՔԱՆ ԲԱՑՎԵԼԸ

- ❑ HVAC համակարգը պետք է ստուգվի HVAC համակարգի մասնագետի կողմից վերաբացմանը նախորդող 30 օրերի ընթացքում և պետք է գտնվի հնարավորինս լավ, գործող վիճակում, օդափոխությունը պետք է ավելացվի: Արդյունավետ օդափոխությունը փոքր աէրոզոլների փոխանցումը վերահսկելու ամենակարևոր միջոցներից մեկն է:
  - ○ Դիտարկեք բարձր արդյունավետությամբ օդը մաքրող շարժական սարքերի տեղադրման տարբերակը՝ առավելագույն բարձր արդյունավետության հասցնելու շենքի օդի զտիչները, և կատարեք այլ ձևափոխություններ՝ ավելացնելու արտաքին օդի և օդափոխության մակարդակը աշխատանքային բոլոր տարածքներում:
  - ○ Մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Կալիֆորնիայի Հանրային Առողջապահության Վարչության [Փակ Տարածքներում Օդափոխության, Զտման և Օդի Որակի Ժամանակավոր](#)

Ուղեցույցը:

- ○ Խնդրում ենք նկատի ունենալ. Օդափոխությունը և փակ տարածքներում օդի որակի բարելավման մյուս տարբերակները հանդիսանում են հավելյալ, այլ ոչ փոխարինող միջոց պարտադիր նախազգուշական միջոցառումներին՝ ներառյալ դիմակ կրելը (բացառությամբ բարձր վտանգավորություն ունեցող որոշ միջավայրերում, որոնք պահանջում են պատշաճ շնչառական պաշտպանություն), մարդկանց միջև առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանելը, հաճախ ձեռքերը լվանալը և այնպիսի գործողությունների սահմանափակումը, որոնք ներգրավում են տարբեր ընտանիքների անդամ հանդիսացող անձանց:

- ❑ Չգործող հաստատությունների համար նախքան վերաբացվելը հինգ րոպե բաց թողեք տաք և սառը ջրի ծորանները՝ փոխարինելու հնացած ջուրը թարմ և անվտանգ ջրամատակարարմամբ:
- ❑ Հաստատությունը պետք է մանրակրկիտ մաքրվի և վարակազերծվի/ախտահանվի (COVID-19-ի դեմ օգտագործման համար հաստատված միջոցների կիրառմամբ), հատկապես, եթե հաստատությունը փակ է եղել:
  - ○ Ըստ անհրաժեշտության մաքրման աճող պահանջի դեպքում դիմեք մաքրման ծառայություններ իրականացնող երրորդ կողմի օգնությանը:
- ❑ Նստելու համար նախատեսված տարածքները, սպասելու համար նախատեսված հենարանները (host stand) և խմիչքների պատրաստման վայրերը պետք է ունենան պատշաճ սանիտարական միջոցներ՝ ներառյալ ձեռքի ախտահանիչները և ախտահանող անձեռոցիկները բոլոր աշխատակիցների համար, որոնք անմիջական օգնություն են տրամադրում հաճախորդներին:
  - ○ Ապահովեք սանիտարական հաստատությունների գործունեությունը և մշտապես անհրաժեշտ պարագաներով հագեցած լինելը, ինչպես նաև ըստ անհրաժեշտության տրամադրեք լրացուցիչ օճառ, թղթե սրբիչներ և ձեռքերի ախտահանիչ միջոցներ:
  - ○ Առաջարկեք ձեռքերի ախտահանիչ միջոցների, օճառի, թղթե սրբիչների և աղբարկղերի համար առանց հպման սարքավորումների տեղադրում:
- ❑ Պատվերները վերցնելու վայրերը պետք է սահմանված լինեն այնպես, որ առաքումները փոխանցվեն բարձր կուտակումներով (խցանված) վայրերից հեռու: Ապրանքների առաքման համար, հնարավորության դեպքում պետք է վերացնել անձանց ֆիզիկական շփումը:

ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Անհրաժեշտ է հետևել և պահպանել Կալիֆորնիայի Սննդի Մանրածախ Առևտրի Օրենսգրքում (CRFC) սահմանված սննդի անվտանգությանը վերաբերող բոլոր գործողությունները:
  - ○ Տաք սնունդն անհրաժեշտ է պահել տաք (135 ° F կամ ավելի բարձր ջերմաստիճան), իսկ սառը սնունդը՝ սառը (41 ° F կամ ցածր ջերմաստիճան):
  - ○ Սնունդը լավ եփեք՝ համաձայն CRFC-ի պահանջի:
  - ○ Մաքրեք և ախտահանեք սպասքը և սարքավորումները՝ համաձայն CRFC-ով սահմանված անհրաժեշտ հաճախականության:
  - ○ Հետևեք աշխատակիցների առողջությանը և հիգիենային վերաբերող քայլերին. Մի՛ աշխատեք, եթե հիվանդ եք. հաճախակի լվացեք ձեռքերը. օգտագործեք ձեռնոցները՝ համաձայն CRFC-ի պահանջի:
  - ○ Հավաստիացեք, որ սնունդը և սննդի բաղադրիչները սննդի հաստատված աղբյուրից են:
  - ○ Սննդամթերք պատրաստող աշխատակիցներին չի խրախուսվում իրենց հերթափոխի ընթացքում փոխել աշխատանքային տարածքը, կամ մուտք գործել մյուսների աշխատանքային վայրեր:

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ

- Ինքնասպասարկման ապարատները, ինչպիսիք են՝ գազավորված ըմպելիքների ապարատները, պետք է կառավարվեն սննդի ոլորտի աշխատակցի կողմից, իսկ հպման մակերեսները պետք է մաքրվեն և ախտահանվեն ամեն ժամ:
- Այն վայրերը, որտեղ հաճախորդները կարող են հավաքվել, կամ դիպչել սննդամթերքին, կամ պարենային ապրանքներին, որոնք կարող են օգտագործել նաև մյուս հաճախորդները, պետք է փակվեն: Այդպիսի պարագաները տրամադրվում են հաճախորդներին անհատապես, և դեն են նետվում, կամ մաքրվում և ախտահանվում են յուրաքանչյուր օգտագործումից հետո՝ ըստ կիրառության: Սա ներառում է, բայց չի սահմանափակվում՝
    - Ինքնասպասարկման տարածքները՝ համեմունքների տարաներով, սպասքի արկղիկներով, անձեռոցիկներով, կափարիչներով, ձողիկներով, ուտելիքը փաթեթավորել- և լցնելու տարաներով և այլն:
    - Ինքնասպասարկման սննդի տարածքները՝ ինչպիսիք են սալաթ բարները, աղցանների բարերը, կամ բուֆետը, ներառյալ սննդի որակի ստուգման վայրերը:
    - Ուտելուց հետո անանուխի կոնֆետները, նախուտեստները, կամ հաճախորդների համար նախատեսված ատամների փայտիկները: Դրանք առաջարկվում են վճարման ժամանակ, կամ տրամադրվում են միայն ըստ պահանջի:
- Սննդի ոլորտում աշխատող նշանակված աշխատակցին անհրաժեշտ է կարգադրել փաթաթել արծաթյա սպասքը՝ նախքան այն հաճախորդին տրամադրելը, քան տարբեր աշխատակիցների կողմից նախքան հաճախորդին տրամադրելը չփաթաթված սպասքին ձեռք տալը:
- Արգելվում է կրկին լցնել խմիչքները սեղանի մոտ կամ ընդհանուր տարաներից (օրինակ՝ սափորներ, կարաֆներ, գրաֆիններ, շշեր): Հաճախորդներին պետք է տրամադրվեն մաքուր ապակյա տարաներ կրկին խմիչքները լցնելու համար :

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

- Զուգարանները պետք է պարբերաբար ստուգվեն, ինչպես նաև մաքրվեն և ախտահանվեն օրական առնվազն մեկ անգամ կամ այնքան հաճախ, որքան, ըստ սահմանված կարգի, անհրաժեշտ է՝ EPA -ի կողմից հաստատված ախտահանիչների օգտագործմամբ:
- Յուրաքանչյուր հերթափոխի սննդի աշխատակցի պետք է հանձնարարել հսկել և ըստ անհրաժեշտության կիրառել մաքրման և ախտահանման լրացուցիչ ընթացակարգեր:
- Անհրաժեշտ է մշակել հաճախակի հպման մակերեսների և մուտքի տարածքների մաքրման և ախտահանման ծրագիր և հետևել այդ ծրագրին:
    - Ընդհանուր օգտագործման տարածքները և հաճախակի հպման պարագաները՝ կապված հաճախորդների կողմից վերցնել-տանելու և վճարման հետ (օրինակ՝ սեղանները, դռների բռնակները կամ բռնակները, վարկային քարտերի ընթերցիչները) աշխատանքային ժամերին օրական առնվազն մեկ անգամ վարակազերծվում են EPA-ի կողմից հաստատված ախտահանող միջոցներով:
- Ավելացրեք մակերեսների մաքրումն ու ախտահանումը, որոնք գտնվում են բարձր շփման վայրերում կամ ենթարկվում են դիմակներ չկրող անձանց ազդեցությանը:
- Հաստատությունը պետք է մանրակրկիտ մաքրվի և վարակազերծվի/ախտահանվի ամեն գիշեր (COVID-19-ի դեմ օգտագործման համար հաստատված արտադրանքներով): Անհրաժեշտ է պահել գրառումների գիրք՝ գործողության ավարտը վերահսկելու համար:
- Ձայնային ականջակալները և ուրիշ սարքավորումներ չպետք է համատեղ օգտագործվեն աշխատողների

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ

կողմից, քանի դեռ սարքավորումը պատշաճ կերպով ախտահանված չէ յուրաքանչյուր օգտագործումից հետո: Խորհրդակցեք սարքավորումներ արտադրողների հետ՝ որոշելու ախտահանման համապատասխան քայլերը:

- ❑ Սպասք լվացող անձանց պետք է տրամադրվի ցայտող ջրի կաթիլների հետևանքով աղտոտումից իրենց աչքերը, քիթը և բերանը պաշտպանող սարք՝ դիմակների, պաշտպանիչ ակնոցների և/կամ դեմքի վահանների համադրությամբ: Սպասք լվացող անձանց պետք է տրամադրվեն անթափանց գոգնոցներ, և դրանք պետք է հաճախ փոխել: Բազմակի օգտագործման պաշտպանիչ սարքավորումները, ինչպիսիք են՝ դեմքի վահաններն ու ակնոցները, պետք է պատշաճ կերպով ախտահանվեն յուրաքանչյուր օգտագործումից առաջ և հետո:
- ❑ Ձեռքերի ախտահանիչ միջոցները և աղբամանները պետք է հասանելի լինեն հաճախորդներին խմիչքների մատուցման բացօթյա տարածքում կամ դրա մուտքի մոտ:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ/ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ

- ❑ Հաճախորդներին պետք է կարգադրել մշտապես կրել դիմակներ, երբ չեն խմում. սա ներառում է նախքան փակ տարածք կամ բացօթյա նստելու տարածքներ մուտք գործելը, փակ տարածքում կամ բացօթյա տարածքների ցանկացած վայրում քայլելիս, և զուգարաններից օգտվելիս: Սա վերաբերում է բոլոր մեծահասակներին և 2 տարեկանից մեծ երեխաներին: Այն անձինք, որոնց իրենց բուժօգնություն տրամադրողը հանձնարարել է չկրել դիմակ, պետք է կրեն ստորին եզրին կտոր ամրացված դեմքի վահան, որպեսզի համապատասխանեն Նահանգի հրահանգներին, եթե իրենց առողջական վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են կզակը ծածկող կտորով դեմքի վահանները: Արգելվում է միակողմանի փականներով դիմակների օգտագործումը: Ձեր աշխատակիցների և մյուս այցելուների անվտանգությունն ապահովելու համար պետք է դիմակը հասանելի դարձնել այն այցելուների համար, որոնք ժամանում են առանց դիմակների:
    - Հաճախորդները կարող են հանել դիմակները միայն սեղանի շուրջ նստած ժամանակ և ուտելիս կամ խմելիս:
    - Ցանկացած խմիչք օգտագործելիս հաճախորդները պետք է նստած լինեն: Ուտելիս կամ խմելիս հաճախորդները չեն կարող քայլել-զբոսնել, կամ կանգնել:
    - Հաճախորդներին, որոնք հրաժարվում են դիմակ կրել, կարելի է չսպասարկել և պահանջել հեռանալ տարածքից:
- ❑ Հրահանգներ հաճախորդների համար. Հաստատությունները պետք է սեղանի վրա տեղադրեն նշան կամ քարտ (ոչ փոքր, քան 3 x 5 մատնաչափ)՝ հաճախորդների խնջույքների միջակայքում յուրաքանչյուր սեղանն ախտահանելուց հետո՝ առնվազն հետևյալ կամ նմանատիպ կարգադրություններով՝

  <<Օգնեք մեզ, որպեսզի բաց պահենք մեր բիզնեսը, պաշտպանենք մեր անձնակազմին և երիտասարդ հաճախորդներին՝ հետևելով մեր պարզ քայլերին՝

  - Կրեք ձեր դիմակը մինչև ձեզ կմատուցեն ձեր խմիչքները և խմիչքը խմելուց հետո:
  - Կրեք ձեր դիմակը յուրաքանչյուր անգամ, երբ մատուցողը մոտենում է ձեր սեղանին:
  - Կրեք ձեր դիմակը յուրաքանչյուր անգամ, երբ լքում եք ձեր սեղանը:
  - Լվացեք կամ ախտահանեք ձեր ձեռքերը:

  Շնորհակալ ենք, որ օգնում եք պաշտպանել մեր անձնակազմի և երիտասարդ հաճախորդների առողջությունը>>:

  COVID-19-ի Թոփ Անվտանգության Սեղանի Գրաֆիկան հասանելի է ներբեռնման համար այստեղ՝ http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/docs/food/TableTop.pdf: Այլ տարբերակներ՝ ինչպես

Կասեցված է այլևս կիրառելի չէ

օրինակ ցուցանակները, թվային տակտակները մյուսներին զուգահեռ, կարող են օգտագործվել խմիչքների մատուցման վայրերում՝ հաճախորդներին տեղեկացնելու և հիշեցնելու հետևյալ հրահանգների մասին, երբ նրանք նստած լինեն կամ հաստատության տարածքում ժամանակ անցկացնելու ամբողջ ընթացքում:

- ❑ Երաժշտության կամ հեռուստացույցի ձայնը պետք է կարգավորվի այն մակարդակով, որ սպասարկող անձնակազմի անդամը կարողանա լսել հաճախորդի պատվերներն՝ առանց կռանալու դեպի հաճախորդը:
- ❑ Մուտքի ստուգումները պետք է իրականացվեն նախքան հաճախորդների կողմից տարածք մուտք գործելը: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև հարցում այն մասին, թե արդյոք անձը տվյալ պահին ենթակա է մեկուսացման կամ կարանտինի հրահանգներին: Նշված ստուգումները կարող են կատարվել անձնապես կամ այլընտրանքային տարբերակներով, ինչպես օրինակ՝ առցանց ստուգման համակարգերի կամ հաստատության մուտքի մոտ փակցված ցուցանակների միջոցով, որը նշի, թե որ ախտանիշներն ունենալու դեպքում այցելուները չպետք է մուտք գործեն տարածք:
  - Ստուգման Բացասական Արդյունք (Մուտքը թույլատրվում է). Եթե անձը չունի ախտանիշ(ներ) և վերջին 10 օրերի ընթացքում շփում չի ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, նա կարող է տվյալ օրը մուտք գործել:
  - Ստուգման Դրական Արդյունք (Մուտքը չի թույլատրվում).
    - Եթե վերջին 10 օրերի ընթացքում անձը շփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ կամ տվյալ պահին ենթակա է կարանտինի պահպանելու հրամաններին, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը կարանտին պահպանելու: Տրամադրեք նրան կարանտին պահպանելու հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidquarantine:
    - Եթե անձի մոտ դրսևորվում է վերևում թվարկված ախտանիշներից որևէ մեկը, կամ նա տվյալ պահին ենթակա է մեկուսացման հրամաններին, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ մեկուսանալու տանը: Տրամադրեք նրան մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել՝ ph.lacounty.gov/covidisolation:
- ❑ Մատուցողներին, սեղանների մաքրողներինը և մյուս աշխատակիցներին, որոնք տեղափոխում են հաճախորդների կողմից օգտագործված իրերը (կեղտոտ բաժակներ, ափսեներ, անձեռոցիկներ և այլն), կամ բռնում են աղբի տոպրակներ (պետք է լվանան իրենց ձեռքերը այդ առաջադրանքներն ավարտելուց հետո) պետք է տրամադրվեն գոգնոցներ, որոնք նրանք հաճախակի պետք է փոխեն:
- ❑ Բազմակի օգտագործման ճաշացանկերը պետք է մաքրվեն և ախտահանվեն հաճախորդների կողմից յուրաքանչյուր օգտագործումից առաջ և հետո: Պետք է հաշվի առնել այլընտրանքային տարբերակները, ինչպիսիք են անշարժ տախտակներով ճաշացանկերը, էլեկտրոնային ճաշացանկերը, կամ բջջային սարքի վրա ճաշացանկը ներբեռնելը:
- ❑ Հաճախորդների համար նախատեսված տարածքների նստատեղերը պետք է մաքրվեն և ախտահանվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո: Նստատեղերը, սեղանները և սեղանի վրա գտնվող այլ իրերը պետք է լինեն մեկանգամյա օգտագործման, կամ մաքրվեն/ախտահանվեն հաճախորդների կողմից օգտագործվելուց առաջ և հետո: Յուրաքանչյուր սեղան պետք է ունենա կամ սեղանի ծածկոց, որը պետք է փոխվի յուրաքանչյուր հյուրից հետո, կամ կոշտ ոչ ծակոտկեն մակերես, որը ախտահանվում է հյուրերից հետո:
- ❑ Վերցնել-տանելու տարաները պետք է լրացվեն հաճախորդների կողմից և հասանելի լինեն միայն ըստ պահանջի:
- ❑ Խրախուսվում են ոչ կանխիկ գործարքները: Հաստատության համար ընդունելի լինելու դեպքում, հաճախորդներին պետք է հնարավորություն է ընձեռել սահեցնել իրենց կրդեիտ/դեբիտ քարտերը, իսկ քարտերի ընթերցիչները պետք է ամբողջությամբ ախտահանվեն յուրաքանչյուր ժամը մեկ:
- ❑ Սեղանի սփռոցները և անձեռոցիկները պետք է հեռացվեն յուրաքանչյուր հաճախորդից հետո:

Ստացված է ալեկսանդրից

Աշխատակիցները պետք է կրեն ձեռնոցներ կեղտոտ կտորներին ձեռք տալու ժամանակ:

- ❑ Ընտրովի - Նկարագրել այլ միջոցառումներ (օրինակ՝ միայն տարեցների համար հատուկ ժամեր սահմանելը, ոչ լարված ժամերին վաճառքի խթանումը)

____

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Սույն արձանագրության պատճենը, կամ հաստատության կողմից տպագրված Լոս Անջելեսի Շրջանի COVID-19-ի Անվտանգության Համապատասխանության Վկայականը պետք է փակցվի հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ: Լրացուցիչ տեղեկությունների կամ COVID-19-ի Անվտանգության Համապատասխանության ինքնուրույն վավերացման ծրագիրը լրացնելու համար այցելեք՝ http://publichealth.lacounty.gov/eh/covid19cert.htm: Հաստատությունները պետք է տեղում պահեն Արձանագրությունների պատճենները՝ ըստ պահանջի վերանայման համար:
- ❑ Նշանները պետք է փակցված լինեն բոլոր մուտքերում, որոնք նախքան ռեստորան մուտք գործելը կհիշեցնեն հաճախորդներին պահպանել վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն, լվանալ ձեռքերը, կամ օգտագործել ախտահանող միջոցներ, ինչպես նաև կրել դիմակ, երբ չեն ուտում կամ խմում, և տանը մնալ, եթե հիվանդ են, կամ ունեն COVID-19-ին համահունչ ախտանիշներ: Լրացուցիչ աղբյուրների և բիզնեսների կողմից օգտագործվող ցուցանակների օրինակների համար տե՛ս Շրջանի DPH-ի COVID-19-ի Ուղեցույցի կայքէջը:
- ❑ Հաստատության առցանց կետերը (վեբ կայք, սոցիալական լրատվամիջոցներ և այլն) պետք է հստակ տեղեկատվություն տրամադրեն հաստատության գործունեության ժամերի, դիմակների օգտագործման անհրաժեշտության, նախնական պատվերների, առաքումների, կանխավճարների, վերցնելու-տանելու և/կամ առաքման նմանատիպ գործողությունների վերաբերյալ:

E. ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Անհրաժեշտ է առաջնահերթություն տալ այն ծառայությունները, որոնք կարևոր են այցելուների/հաճախորդների համար:
- ❑ Գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռակա կարգով, պետք է տեղափոխվեն առցանց հարթակ:
- ❑ Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ՝ ապահովելու ապրանքների և ծառայությունների մատչելիությունն այն հաճախորդների համար, որոնք ունեն շարժունակության սահմանափակումներ և/կամ հանրային տարածքներում գտնվում են բարձր վտանգի ներքո:

Վերևում ներառված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնք բիզնեսը պետք է կցի սույն փաստաթղթին:

Սույն Արձանագրության վերաբերյալ հարցերի կամ մեկնաբանությունների դեպքում կարող եք կապ հաստատել հետևյալ անձի հետ՝

Բիզնեսի Կոնտակտային Անձի Անունը ______________________________

Հեռախոսահամարը՝ ______________________________

Վերջին Վերանայման Ամսաթիվը՝ ______________________________

Կասեցված է՝ այլևս արդիական չէ

Նստելակարգի Դիագրամներ

Հետևյալ վեց (6) դիագրամները պետք է կիրառվեն փակ և բացօթյա տարածքներում նստատեղերի տեղադրման համար: Պատնեշներ չպետք է օգտագործվեն հաճախորդների միջև հեռավորությունը նվազեցնելու և նստատեղերի հնարավորությունը ավելացնելու համար: Սեղանների եզրերն իրարից 8 ոտնաչափ հեռավորությամբ առանձնացնելը հաճախորդների միջև պետք է ապահովի առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն:

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ

Դիագրամ 1



Կողք կողքի Նստատեղեր
6 ոտնաչափ աթոռների միջև
Աթոռի եզրից մյուս աթոռի եզրը

Դիագրամ 2



Ուղղահայաց Նստատեղեր
6 ոտնաչափ՝ հաճախորդի նստատեղի և հարակից սեղանի նստատեղերի միջև
Աթոռի եզրից մյուս աթոռի եզրը

Դիագրամ 3



Կողք կողքի Նստատեղեր
6 ոտնաչափ աթոռների մեջքերի միջև՝ աթոռները տեղադրված իրար մեջքով

Դիագրամ 4



Խառը նստատեղեր
6 ոտնաչափ՝ աթոռների ամենամոտ կետերից
Վերաբերում է ցանկացած ձևի սեղաններին

Դիագրամ 5



Համատեղ Նստատեղերով սեղաններ, չկան պատնեշներ
6 ոտնաչափ մյուս խնջույքի ամենամոտ անդամից
Աթոռի եզրից մյուս աթոռի եզրը

Դիագրամ 6



Տաղավարներ
Հաճախորդները կարող են նստեցվել հաստատուն տաղավարների շուրջ՝ հաճախորդների միջև թույլատրելու նվազագույնը 6 ոտնաչափ հեռավորություն